



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Գ Ի Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«04» հոկտեմբերի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 34-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ  
ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 26.07.2019 թ. № 27-Ա/Ք հրամանով ստեղծված գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հայտերի գնահատման մրցությամբ հանձնաժողովի 03.10.2019 թ. նիստի արձանագրությունը և ելնելով նախատեսված ֆինանսական հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի շահառուների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին

ՍԱՄԿԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՑԱՆԿ**

**ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ**

Հ/հ	Գիտական կազմակերպությունը/բարձրագույն ուսումնական հաստատությունը	Սարքավորման անվանումը
1	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ	Բազմաֆունկցիոնալ սկանավորման համակարգ
2	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	Բազմաֆունկցիոնալ լազեր (ճառագայթման սարք)
3	«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	Հեղուկ քրոմատոգրաֆ (մասս-սպեկտրոմետրի հետ համակցված)
4	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (Ֆիզիկայի ԳՀԻ, Կենսաբանության ԳՀԻ)	UV-VIS սպեկտրոմետր և դիֆերենցիալ սկանավորող միկրոկալորիմետր
5	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	UV-VIS սպեկտրոմետր և դիֆերենցիալ սկանավորող միկրոկալորիմետր
6	ՀՀ ԳԱԱ «Ակադեմիկոս Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	Մոլեկուլային (ատոմաուժային) մանրադիտակ
7	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	Շարժական լաբորատոր համալիր (գերբարձր հաճախականության)
8	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	Ռադիոտեղորոշիչ սարքավորում (գերբարձր հաճախականության)